

**Հայաստանի Հանրապետության
կենտրոնական բանկի նախագահ
պրն. Ա. Չավադյանին**

Հարգելի պարոն Չավադյան

Համաձայն ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի կանոնակարգ 4/04-ի, 50-րդ կետի Ձեզ եմ ներկայացնում «Շեն-Կոնցեռն» ՓԲԸ-ին վերաբերող 05.12.11թ-ի էական տեղեկությունը, որը նաև տեղադրված է նաև մեր պաշտոնական կայքում (կցվում է առդիր 1 թերթ):

Գործադիր տնօրեն

Պապ Բաղդյան

05.12.11թ.

**Համաձայն ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի կանոնակարգ 4/04-ի, 50-րդ կետի,
բացահայտում են «Շեն-Կոնցեռն» ՓԲԸ-ին վերաբերող հետևյալ էական տեղեկությունը՝**

1. 2011թ-ի դեկտեմբերի 02-ին «Շեն-Կոնցեռն» ՓԲԸ-ի (այսուհետև՝ Ընկերություն) և «ԷյՋ Էս Բի Սի բանկ Հայաստան» ՓԲԸ-ի միջև կնքվել է վերջինիս կողմից 2600.0 հազար ԱՄՆ դոլար վարկի տրամադրման պայմանագիր, որից 2000.0 հազար ԱՄՆ դոլար վարկը նույն օրը տրամադրվել է: Վարկի 1580.0 հազ. ԱՄՆ դոլարը օգտագործվել է 600.0 մլն դրամի պարտատոմսի մայր գումարի մարման համար, 151.0 հազ. ԱՄՆ դոլարը օգտագործվել է Ռիգայից Իսպանական 1250.0 հազ. ԱՄՆ դոլար ընդհանուր արժողության Poyatos ընկերության սարքավորման ձեռքբերման համար, որը նախատեսվում է տեղադրել Ընկերությանը պատկանող «Հանթսման Բիլդինգ Փրոդաքթս» ՍՊԸ-ի տարածքում: Մնացած գումարը նախատեսվում է օգտագործել Ընկերության կապիտալ և ընթացիկ ծախսերը հոգալու համար:

2. Ընկերությունը 5000.0 հազ. ԱՄՆ դոլարի վարկի ստացման պայմանավորվածություն է ձեռքբերել Վերակառուցման և Ջարգացման Եվրոպական Բանկի հետ, համաձայն որի վերջինիցս 1-ին տրանշի տեսքով ստանալու է 3700.0 ԱՄՆ դոլար, որից մոտ 3500.0 ԱՄՆ դոլարով նախատեսվում է մարել Ամերիաբանկ ՓԲԸ-ում ունեցած վարկային միջոցները՝ տոկոսադրույքի բարձր լինելու կապակցությամբ (ՎՋԵԲ-ի տոկոսադրույքը լինելու է միամսյա Լիբոր գումարած 5.5 հաստատուն տոկոսադրույք): Ընկերության Գեկոր խանութների ցանցը ընդլայնելու կապակցությամբ (մասնավորապես արդեն բացվել է Արշակունյաց 41 հասցեում նոր խանութ սրահ և Գ. Անհադթի 8 հասցեում կբացվի 2012թ-ի փետրվարին՝ խանութի վերանորոգման աշխատանքները ավարտելուց հետո) Ընկերությունը նախատեսում է ավելացնել իր ապրանքային տեսականին սկզբում 200.0 հազ. ԱՄՆ դոլարի սահմաններում: 2-րդ տրանշով գումարը կստանանք 2012թ-ի հոկտեմբերին 500.0 մլն դրամի պարտատոմսի մարման համար, եթե մինչ այդ պարտատոմսի նոր թողարկում տվյալ գումարի սահմաններում չկատարենք: